ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

03.10.2019
343-17

ՀՀ կադաստրի կոմիտեի
ղեկավար պարոն Սարհատ Պետրոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պետրոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ո՞վ է Ձեր գերատեսչությունում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը (խնդրում ենք նշել անունը, ազգանունը, իր հետ կապի միջոցները),

2. Տեղադրվա՞ծ է արդյոք ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվությունը Ձեր գերատեսչության կայքում (եթե այո, ապա խնդրում ենք նշել հիպերհղումը),

3. Խնդրում ենք տրամադրել այն իրավական ակտի պատճենը, որով նշանակվել է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան